ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ N 602-Ա

18 նոյեմբերի 2024թ.
ք. Իջևան

ԱԼՎԱՐԴ ՍՈՒՔՈՅԱՆԻՆ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի՝ <<Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին>> թիվ 878-Ն որոշումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1.2024 թվականի նոյեմբերի 18-ից Ալվարդ Սուքոյանին Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնում փորձագետ ներգրավել մինչև 2025 թվականի փետրվարի 18-ը:

2.<<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ մասնագիտական պաշտոնների երկրորդ խմբի սանդղակի և աշխատավարձի 1-ի մակարդակի գործակցի /3.21/ կիրառմամբ՝ 267072/ երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու/ ՀՀ դրամ:

Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

18.11.2024

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

2024 թվականի նոյեմբերի 12-ին ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում տրվել է հայտարարություն մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնում փորձագետ ներգրավելու մասին:

Սահմանված ժամկետում դիմել են երեք հավակնորդ՝ Ալվարդ Սուքոյանը, Անի Ոսկանյանը և Աշխեն Վիրաբյանը:

Դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Ալվարդ Սուքոյանի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

18.11.2024թ.